ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 17.08.2017թ. N 96/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.08.2017թ. ժամը 10-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Երեղյանը, Գ.Օսիպյանը, Մ.Սարդարյանը, Ա.Հայրապետյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

Հաշվի առնելով, որ ԱՁ Արման Ասմանգուլյանը սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով ներկայացրել է Հավելված-1-ի շտկված տարբերակը (կցվում է)՝
-գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1. Արման Ասմանգուլյանին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկները արձանագրեց, որ 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար մասնակիցների կողմից ներկայացրած գները գերազանցում են ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գները (4-րդ չափաբաժնի նախահաշվային գինը 48 000 ՀՀ դրամ է, իսկ 5-րդ չափաբաժնի նախահաշվային գինը 250 000 ՀՀ դրամ է):
Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ հայտով գնային առաջարկ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներին (4-րդ չափաբաժնի համար՝ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին, «Սմարթլայն» ՍՊԸ-ին, «ՍՏԱՆԴԱՐՏ 2014» ՍՊԸ-ին, իսկ 5-րդ չափաբաժնի համար՝ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին, «Սմարթլայն» ՍՊԸ-ին, «ՍՏԱՆԴԱՐՏ 2014» ՍՊԸ-ին, ԱՁ Արման Ասմանգուլյանին) հրավիրել գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների:
3. Նիստը վերսկսել՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ին, ժամը 11:00-ին և գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունները կազմակերպել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Գ.Երեղյան

Գ.Օսիպյան

Մ.Սարդարյան

Ա.Հայրապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան